

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՆԱՀԻՏ ՌԱՖԻԿԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՐԺՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԴԱՍՏԻԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՓՈԽԱՐԻՆԵԼՈՒ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն»
մասնագիտությամբ

մանկավարժական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Վանաձորի «Մխիթար Գոշ» հայ- ռուսական միջազգային համալսարանում:

Գիտական ղեկավար՝

Մանկավարժական գիտությունների
դոկտոր՝ **Ս.Պ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Մանկավարժական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր՝
Գ.Պ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

Մանկավարժական գիտությունների
թեկնածու՝ **Ա.Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

Առաջատար կազմակերպություն՝

Վալերի Բոյուսովի անվան պետական
լեզվահասարակագիտական
համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014թ. հոկտեմբերի 9-ին, ժամը 12⁰⁰ - ին Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում ՀՀ ԲՈՀ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0010, ք.Երևան, Տիգրան Մեծի 17

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014թ. սեպտեմբերի 9-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
մանկավարժական գիտությունների թեկնածու,
դոցենտ՝

 **Ս. Ս. ԿԱՅՅԱՆ**

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: 21-րդ դարի առաջին տասնամյակում Հայաստանում և Ռուսաստանում քննարկման առարկա դարձավ մանկավարժագիտությունը դաստիարակագիտությամբ փոխարինելու անհրաժեշտությունը: Այդ գիտությունը դպրոցին **գրկել է՝** ուսուցմամբ կայացող դաստիարակության **կառավարումից, իր ուսուցման և դաստիարակության տեսություններով:** Դրանով մանկավարժագիտությունը ուսուցումը ներկայացնում է որպես չդաստիարակող գործընթաց, ինչպիսին իրականում գոյություն չունի, իսկ դաստիարակությունն էլ դպրոցում, ըստ մանկավարժագիտության, կայանում է միայն դասերից հետո, այսինքն, այն համարյաթեչկա:Որ մանկավարժագիտությունը դպրոցին գրկել է դաստիարակելու գործառույթից, բացահայտվում է նաև նրանով, որ չկա դպրոցի դաստիարակչական գործունեության արդյունավետությունն ուղղորդող և ստուգող որևէ չափորոշիչ, բոլոր չափորոշիչները վերաբերում են դասանյութերի յուրացմանը: Ռուսաստանում ևս կա բացասական վերաբերմունք մանկավարժագիտության նկատմամբ: Դա հիմնավորվում է նրանով, մանկավարժական պրակտիկայի արդյունքները ցույց են տալիս դպրոցի վիճակի վատթարացման միտումներբոլոր պարամետրերով: Ահա թե ինչու անխուսափելի է համարվում մանկավարժագիտության վերակառուցմանանհրաժեշտությունը:

Փաստորեն չկա դաստիարակության լիարժեք տեսություն: Մինչդեռ, դրա անհրաժեշտությունը հիմնավորվում են նաև ՌԴ-ի մանկավարժագիտության բոլոր դասագրքերում անգամ, երիտասարդության դաստիարակվածության անհանգստացնող մակարդակի մասին հնչող ահազանգերը: Հայաստանում ևս կա այդ խնդիրը:

Որպես հիմնական պատճառ է համարվում այն, որ դպրոցն ու արտադպրոցական հաստատությունների մեծ մասը դադարեցին զբաղվել երեխաների և դեռահասների դաստիարակությամբ: Դեռևս չկա դաստիարակության աշխատունակ հայեցակարգ: **Դա հասարակության և նրա ուրաքանչյուր անդամին հասցրած մեծագույն վնասներից է:**

Ահա թե ինչու Հայաստանում ևս խնդիր է դիտվում ոչ թե վերակառուցել մանկավարժագիտությունը, ինչպես Ռուսաստանում են առաջարկում, այլ նրանից հրաժարվելն ու դաստիարակագիտությունկառուցելը:Ներկայացվող հետազոտությունը փորձում է մասնակցել այդ աշխատանքներին յուրահատուկ ձևով: Կա, սոցիալական կոչվող մանկավարժագիտություն, որը գործնականում կապ չունի մանկավարժական գործունեության հետ, քանի որ նրա առարկան հիմնականում երեխաների արտադպրոցական կյանքն է: Սակայն, լինելով մանկավարժագիտության ճյուղերից մեկը, նա, հավատարիմ լինելով նրան, նույնացնում է դաստիարակչականգործունեությունը դաստիարակությանը:Այլ կերպ ասած, սոցիալական կոչված մանկավարժագիտությունն իր առարկայի՝ դաստիարակության, մասին ունի ոչ համարժեք պատկերացում, որն էլ լիարժեք կասկածի տակ է դնում նրա սոցդաստիարակագիտության գիտության լինելու կարգավիճակը: Ուրեմն, անհրաժեշտ է սոցմանկավարժագիտությունը փոխարինել սոցդաստիարակագիտությամբ, ոչ միայն, ազատվելով մանկավարժագիտության արդեն բացահայտված արատներից, այլև փորձելով սոցդաստիարակագիտությունը հագեցնել դաստիարակության էության մասին և այն կառավարելու համար անհրաժեշտ գիտելիքներով:Հետազոտության

Թեմայի ընտրությանսկիզբը պայմանավորված է նրանով, որ 20-րդ դարի քսանական թվականներին ԽՍՀՄ-ում խոսքը սոցիալական դաստիարակի մասին էր: Բայց ահա 1991թ.լույս տեսավ «Սոցիալական մանկավարժություն» աշխատությունը, և շրջանառության մեջ դրվեց այդ հասկացությունը: Հետագայում լույս տեսան «Սոցիալական մանկավարժություն»անուններով բուհական դասագրքերը՝ շարքից հանելով ոչ միայն «սոցիալական դաստիարակ» հասկացությունը, այլև ներկայացնելով «Սոցիալական մանկավարժություն»անունով մի գիտություն, որի առարկան չի համապատասխանում իր անվանը: Եթե մանրամասնենք ներկայացվածը, կստացվի հետևյալ պատկերը:Սոցիալական մանկավարժությունը լինելով մանկավարժագիտության ճյուղերից մեկը, որդեգրել է նրա արատների մի մասը, որի պատճառով էլ ապակողմնորոշում է սոցիալական դաստիարակներին իրենց աշխատանքում, բուհերին էլ՝ սոցիալական դաստիարակության կադրերի պատրաստման գործում, ինչպես և խոչընդոտում սոցիալականդաստիարակությանզարգացմանը:

Ահա դրանից մի քանիսը, որոնք ցույց են տալիս, որ սոցիալական մանկավարժագիտությունը սոցիալական դաստիարակագիտությամբ փոխարինելը սոսկ անվանափոխություն չէ, ինչպես կարող էթվածառաջինհայացքից:

Մանկավարժագիտության բոլոր դասագրքերում դաստիարակությունը ներկայացվում է որպես հասարակական-պատմական փորձը ավագ սերնդից կրտսեր սերունդներին փոխանցելու գործընթաց, դրանով իսկ այն դիտարկելով ոչ թե որպես մարդու մեջ կատարվող որակական փոփոխությունների գործընթաց՝, այլ հասարակական-պատմական փորձի փոխանցման գործընթաց: Այսինքն խոսքը ոչ թե կայացող դաստիարակության, այլ դաստիարակչական գործունեության մասին է: Սոցիալական դաստիարակագիտությունը հրաժարվում է իրականությանը այդ ոչ համարժեք դիրքորոշումից, առաջնորդվելով անտիկ աշխարհից եկող և հետագայում էլ զարգացվող այնդիրքորոշմամբ, ըստ որի դաստիարակությունը մարդու գործունեությամբ նրա ֆիզիկական և հոգեկան ուժերում կայացող որակական փոփոխությունների օբյեկտիվ գործընթացն է: Դա այդպես է, քանի որ օրինաչափ կապը կա մարդու գործունեության բնույթի և նրա հոգեկան աշխարհում կատարվող փոփոխությունների բնույթի միջև: Ազատվելով սոցիալական մանկավարժագիտության այդ արատից, սոցիալական դաստիարակագիտությունը պետք է մտածի երեխաների սոցիալական դաստիարակությունը կանոնակարգելու մասին: Այս հանգամանքն անգամ վկայում է, որ խոսքը միայնանվանափոխությանմասինչէ:

Բացի այդ, սոցիալական դաստիարակագիտության առջև կանգնած են լուծման սպասող շատ խնդիրներ:

Դաստիարակությունը լինելով օբյեկտիվ գործընթաց, չունի սկզբունքներ, մեթոդներ և նպատակներ, ինչպես որ ընդունում է մանկավարժագիտությունը, հետևաբար և՛ սոցիալական մանկավարժագիտությունը: Պետք է լինեն դաստիարակության կառավարման սկզբունքներ, մեթոդներ ու նպատակ: Այդ խնդիրը ևս պետք է լուծի սոցիալական դաստիարակագիտությունը:

Ըստ մանկավարժագիտությունից սոցիալական մանկավարժագիտությանը անցած դաստիարակության մեթոդների հայեցակարգի, այդ մեթոդները ներկայացվում են որպես գործունեության կազմակերպման, գիտակցության ձևավորման և գործունեության դրդապատճառների ապահովման միմյանցից

առանձնացված մեթոդների երեք խմբեր: Դրանով իսկ ասվում է, թե, իբր, գործունեությունը չէ գիտակցությունը ձևավորողը, թե մարդու գիտակցությունը նրա գործունեության շնորհիվ չի ձևավորվում, թե գործունեությունը լինում է առանց դրդապատճառի: Այս ամենը չի համապատասխանում իրականությանը, քանի որ չկա գործունեությունից դուրս ձևավորող գիտակցություն, ինչպես և՛ չկա դրդապատճառ չունեցող գործունեությունը:

Նման մեթոդները չեն համապատասխանում իրականությանը, ուստի այս բնագավառում ևս սոցիաստիարակագիտությունն խնդիր ունի: Կարևոր է նաև երեխաներին նախատեսված գործունեության մեջ ընդգրկելուն ծառայող դրդապատճառների ապահովման խնդիրը, ինչպես և մանկավարժագիտության մշակած դաստիարակվածությունը միշտ դրական բովանդակության պատկերացումից ազատվելու անհրաժեշտությունը: Դաստիարակի կազմակերպած գործունեության մեջ երեխաներին ինքնակամ ընդգրկելու և դրանով իսկ նրանց դաստիարակվածության մեջ անհրաժեշտ է փոփոխություններ կատարելու համար: Պետք է որոշել այդ գործունեության մասնակցելու երեխաների կոլեկտիվ նպատակը և դա նրանց գիտակցության մեջ ձևավորելու եղանակը: Այդ խնդիրը պետք է լուծվի սոցիալական դաստիարակագիտության ուժերով: Վիճակըցույց է տալիս, սոցիաստիարակագիտությունն այս և այլ շատ խնդիրներ լուծելու պարտականություններ ունի: Մանկավարժագիտությունից սոցիալական մանկավարժագիտության որդեգրած այս արատներից սոցիալական դաստիարակագիտության ազատվելը կարևոր է նաև թե դպրոցի դաստիարակագիտության, և թե ընդհանուր դաստիարակագիտության կառուցման համար, քանի որ այդ արատները հատուկ են մանկավարժագիտության մշակած դաստիարակության տեսությանը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ «Սոցիալական մանկավարժություն» կոչվող գիտությունը փոխարինել «սոցիալական դաստիարակագիտությամբ», քանի որ «սոցիալական մանկավարժություն» կոչվող գիտությունը չի համապատասխանում իր անվանն ու իրականությանը և կարիք է զգում արմատական փոփոխությունների:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕՐՅԵԿՏԸ Մանկավարժագիտությունը դաստիարակագիտությամբ փոխարինելու ուղղորդվածությամբ ՌԴ-ում և ՀՀ-ում տարվող աշխատանքների համակարգն է: **ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ.**

Սոցիալական և, ամենուրեք կայացող դաստիարակության օբյեկտիվ գործընթացը կառավարելու կոչված դաստիարակներին սոցիալական մանկավարժությունն ընդհանրապես մանկավարժություն կոչվող, սակայն իրենց էությանը չհամապատասխանող գիտությունների՝ նրանց ապակողմնորոշելու պատճառով ստեղծված արմատական փոփոխությունների կարիք զգացող վիճակն է: Փաստորեն սոցիալական մանկավարժագիտությունը սոցիալական դաստիարակների դաստիարակչական գործունեությունը և այդպիսի մասնագետներ թողարկող բուհերի համար ապակողմնորոշող վիճակ է ստեղծել, որը պետք է արմատական փոփոխությունների ենթարկի:

Այդ վիճակն էլ դարձել է հետազոտության առարկա, որի նախատեսված փոփոխությունը կապահովի հետազոտությանն պատակին հասնելը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՆՆԴԻՐՆԵՐԸ.

1. Բացահայտել սոցիալական մանկավարժությանը նվիրված հիմնական աշխատությունների վերնագրերի և բովանդակությունների միմյանց

չհամապատասխանելը՝ այդ մանկավարժագիտությունից հրաժարվելու հետագահամարժեքայլերկատարելու համար:

2. Հիմնավորել սոցիալական մանկավարժագիտությունը ընդհանուր մանկավարժագիտության դուստր գիտություն չլինելը:

3. Բացահայտել.

3.1. Սոցիալական մանկավարժ կոչվածի և սոցիալական դաստիարակի գործառույթների տարբերությունները «Սոցիալական մանկավարժագիտություն»-ից հրաժարվելը հիմնավորելու համար:

3.2. «Սոցիալականացում» և «դաստիարակություն» հասկացությունների միմյանց հետ ունեցած իրական հարաբերակցությունը:

3.3. «Սոցիալականացում» և «դաստիարակություն» հասկացությունների միմյանց հետ ունեցած հարաբերակցության պատկերացումը հոգեբանական գրականության մեջ, **սոցիալականացումը դաստիարակության արգասիք համարելու լրացուցիչ հիմնավորում** ունենալու համար:

3.4. Դաստիարակագիտության կայացման ակունքներից հեռանալու և այն մանկավարժագիտությամբ փոխարինելու իրողությունը, որպես մանկավարժական կոչվող բոլոր գիտությունները օբյեկտիվորեն կայացող դաստիարակությունը կառավարելու գործառույթից զրկող մոտեցումը, դրանով իսկ հիմնավորելով այդ **ակունքներին վերադառնալու ինչպես և ի վերջո ընդհանուր դաստիարակագիտության անցնելու անհրաժեշտությունը:**

4. Հետագա համարժեք աշխատանքներ կատարելու և պատակաուղղորդվածությամբ հիմնավորել.

4.1. Դպրոցը դաստիարակագիտության ինստիտուտ դիտարկելու անհրաժեշտությունը:

4.2. Մանկատունը սոցիալական դաստիարակության ինստիտուտ և դաստիարակագիտության պահանջատեր դիտարկելը:

4.3. «Սոցիալական մանկավարժ» և «սոցիալական մանկավարժություն» հասկացություններից, ինչպես և սոցիալական աշխատանքը մանկավարժական համարելուց հրաժարվելը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՎԱՐԿԱԾՈՒ.

Ենթադրվում է որ, աշակերտության զգալի զանգվածի ոչ այնքան էլ ցանկալի վերաբերմունքը ուսումնական գործունեությանն կատմամբ, ինչպես և դպրոցականների առաջադիմության ոչ գոհացուցիչ մակարդակը, ամենայն հավանականությամբ, պետք է բացատրել մանկավարժագիտության այն թերությամբ, որը դրսևորվում է ուսուցման գործընթացը դաստիարակության տեսության առարկայական սահմաններում չներառելով, դրանով իսկ անտեսելով ուսումնական գործունեության օբյեկտիվ նշանակությունը աշակերտների համար սուբյեկտիվ դարձնելու հույժ կարևոր խնդրի գոյությունն ու նրա լուծման հրատապությունը: Այդ թերություններից ազատվելը, ամենայն հավանականությամբ հնարավոր չէ մանկավարժագիտությունը կոսմետիկական փոփոխությունների ենթարկելով:

Ենթադրվում է, որ վիճակը կարելի է փոխել մանկավարժագիտությունը դաստիարակագիտությամբ փոխարինելով, այդ աշխատանք սկզբնական շրջանում սկսելով սոցիալական մանկավարժ կոչվող գիտությունը սոցիալական դաստիարակագիտությամբ փոխարինելով:

Ենթադրվում է, որ հաջողության դեպքում հիմքեր կստեղծվեն ոչ միայն դպրոցի, այլև մանկավարժություն կոչվող մի շարք գիտությունները դաստիարակագիտությամբ փոխարինելու համար, դրանով իսկ լուծելով ամենուրեք կայացող դաստիարակության կառավարման հիմնախնդիրը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔ է ընդունվել մանկավարժական գիտության ականավոր ներկայացուցիչների աշխատություններում (Պլատոն, Ամոս Կոմենսկի, Ջոն Լոք, Ժան-ժակ Ռուսո, Կ.Դ. Ուշինսկի, Ա. Մակարենկո), ուսուցումը որպես դաստիարակություն իրականացնող, իսկ դաստիարակությունն էլ մարդկանց ցանկություններով չպայմանավորվող, բայց նրանց գործունեությամբ նրանցում կայացող որակական փոփոխությունների օբյեկտիվ գործընթաց դիտարկելը, ինչպեսայն դրույթը, որ մանկավարժական և դաստիարակչական գործունեությունները միշտ չէ, որ միևնույն հարթության վրա են դրվում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ:

— Հիմնախնդրին նվիրված գիտական գրականության քննախույզ ուսումնասիրության մեթոդ՝ հիմնավորելու համար հիմնախնդրի գոյությունը և այն լուծելու հրատապությունը:

— Գրականության մեջ հետազոտությանը վերաբերող հասկացությունների վերհամման և միմյանց հետ համեմատելու մեթոդները:

— Գրականության մեջ ներկայացված դաստիարակության էության պատկերացումների տարբերության բացահայտման և միմյանց հետ դրանք համեմատելու մեթոդները՝ իրականությանը առավել համապատասխանող հայտնաբերելու և դրանով հետազոտության ժամանակ առաջնորդվելու համար:

— Ուսուցիչների մանկավարժական գիտակցության մեջ հիմնախնդրին վերաբերող գիտելիքների վիճակը բացահայտող թեստեր և հարցաթերթիկները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ:

Ձեռք են բերվել սոցմանկավարժագիտությունը, սոցդաստիարակագիտությամբ փոխարինելու հիմնախնդրի լուծման տարբերակն ստեղծող գիտելիքների համակարգ այնմասին, որ:

1. **Իրականությանը չի համապատասխանում մանկավարժագիտության մեջ սոցիալական դաստիարակի գործունեությունը մանկավարժական համարելը՝ օգտագործելով «սոցիալական մանկավարժ» հասկացությունը, քանի որ մանկավարժ-դաստիարակի և սոցիալական դաստիարակի գործառույթները արմատապես տարբերվում են միմյանցից:** «Սոցիալական մանկավարժ» և «սոցիալական դաստիարակ» հասկացություններից առաջինը պետք է հանել շրջանառությունից՝ բովանդագուրկ լինելու պատճառով: Նույն հիմնավորմամբ էլ «սոցիալական մանկավարժություն» անվանվող գիտությունը գրավի իրականությանը համապատասխանող «սոցիալական դաստիարակագիտություն»-ը:

2. **Պաշտոնապես ընդունված «սոցիալական մանկավարժագիտություն» անվանվող գիտությունը իրականում բովանդակելով գիտելիքներ ոչ թե մանկավարժի, այլ սոցիալական դաստիարակի մասին, չի կարող լինել ընդհանուր մանկավարժագիտության ճյուղերից մեկը:** Նման բացահայտումը սոցիալական մանկավարժագիտությունը սոցիալական դաստիարակությամբ փոխարինելու նոր հիմք է ստեղծում՝ գիտական հորիզոնում տեսնելով մանկավարժագիտությանը փոխարինված դաստիարակագիտությունը: Իսկ սոցիալական դաստիարակագիտությունն էլ ոչ թե դպրոցի, այլ ընդհանուր դաստիարակագիտության կազմում:

3. Սոցիալական մանկավարժն իր դաստիարակչական գործառույթներն իրականացնում է ոչ մանկավարժական գործունեությամբ, որն էլ լրացուցիչ հիմք է դառնում սոցիալական մանկավարժագիտությունը սոցիալական դաստիարակագիտությամբ փոխարինելու համար:

4. Իրականությանը չի համապատասխանում մանկավարժագիտական գրականության մեջ զանգվածաբար օգտագործվող «ժողովրդական մանկավարժություն» հասկացությունը: **Իրականությանը չի համապատասխանում նաև ժողովրդական դաստիարակությունը իր առարկան դարձրած գիտությունը «ժողովրդական մանկավարժագիտություն» անվանելը,** քանի որ ժողովուրդը դաստիարակ է, բայց ոչ մանկավարժ: Ժողովուրդն ունի մանկավարժներ, բայց ինքը մանկավարժ չէ: Ահա թե ժողովրդական դաստիարակությունը իր առարկան դարձրած այդ գիտությունը պետք է անվանել ժողովրդական դաստիարակագիտություն, որն իր հերթին ևս կնպաստի սոցիալական դաստիարակագիտության կայացմանը, մոտ ապագայում էլ դպրոցի դաստիարակագիտության, իսկ հետագայում էլ գլոբալ նշանակություն ունեցող ընդհանուր դաստիարակագիտության կառուցմանը:

5. «Սոցիալականացում» և «դաստիարակություն» հասկացությունների բովանդակությունների միմյանց հետ համեմատելուց բխում է այն եզրակացությունը, որ **սոցիալականացումը սոցիալական դաստիարակության արգասիքներից մեկն է,** որի մասին վաղուց է խոսվում: Այս բացահայտմամբ ձեռք բերված գիտելիքները իրենց հերթին շինանյութ են դառնում սոցիալականագիտության կառուցման համար:

6. Մանկավարժագիտությունն իր ուսուցման և դաստիարակության միմյանցից առանձնացված տեսություններով, դպրոցին զրկել է ուսուցմամբ կայացող աշակերտների դաստիարակությունը կառավարելու գործառույթից, որի մասին վաղուց են ցավով գրում բոլորը: Ահա թե ինչու **սոցիալական դաստիարակագիտության կառուցումը նպաստելու է դպրոցի դաստիարակագիտության կայացմանը,** որն աշակերտների ուսուցմամբ կայացող դաստիարակություն կառավարումը կդիտարկի որպես դպրոցի գերակա գործառույթ:

7. Սոցիալական մանկավարժագիտությունը սոցիալական դաստիարակագիտությամբ փոխարինելու հիմնախնդրի լուծումը հնարավորություն է տալիս հետագայում անցնել ընդհանուր մանկավարժագիտությունը ընդհանուր դաստիարակագիտությամբ փոխարինելուն. որի դեպքում դպրոցում իրականացվող ողջ գործունեությունը կծառայի աշակերտների կայացող դաստիարակության կառավարմանը՝ չպայմանավորելով ուսուցչական կոլեկտիվի կամքով և ցանկություններով:

8. Իրականությանը չի համապատասխանում գրականության մեջ սոցիալական աշխատողին սոցիալական մանկավարժին նույնացնելը, համարելով դա տարբեր անուններով ներկայացվող նույն իրողություն, կամ սոցիալական մանկավարժի և սոցիալական աշխատողի հարաբերակցությունը դիտարկել որպես ընդհանուրի և մասի հարաբերակցություն, կամ էլ, սոցիալական աշխատանքը և սոցիալական մանկավարժագիտությունը ներկայացնել որպես միևնույն գիտության ճյուղեր:

9. Սոցիալական աշխատողը ոչ մանկավարժ է, ոչ էլ դաստիարակ ի պաշտոնե: Սոցիալական աշխատողը «Սոցիալական աշխատանք» գիտության առարկայի, իսկ սոցիալական դաստիարակն էլ՝ սոցիալական դաստիարակագիտության առարկայի մեջ պետք է ընդգրկվեն, ունենալով

առանձնահատուկ գործառույթներ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:

Դաստիարակության տեսությունը հարստացվում է «սոցիալական դաստիարակագիտություն» նոր հասկացությամբ, որի շնորհիվ դպրոցի համար ստեղծված գիտությունը համալրվում է դաստիարակությունը դպրոցի գերակա նպատակը դարձնող տեսական դրույթներով, որոնք նպաստում են ուսուցմամբ իրականացվող դաստիարակության կառավարման տեսության զարգացմանը, ինչպես և տեսական հիմքեր ստեղծվում դպրոցի մանկավարժագիտությունից դպրոցի դաստիարակագիտությանը անցնելու համար:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:

Հետազոտության արգասիքների տեսական օբյեկտիվ նշանակությունը կրթահամակարգի ղեկավարության համարժեք գնահատման դեպքում արմատական փոփոխությունների կենթարկվի սոցիալական դաստիարակության կառավարման պրակտիկան՝ շեշտը դնելով ոչ մանկավարժական գործընթացով իրականացվող դաստիարակչական աշխատանքների վրա: Մանկավարժական բուհերում սոցիալական դաստիարակների պատրաստման գործընթացը կառանձնացվի մանկավարժների պատրաստման պրակտիկայից, որը շատ կարևոր է, քանի որ այսօրվա դրությամբ մանկավարժական բուհերը հիմնականում առաջնորդվում են ուսուցումը դաստիարակության տեսության առարկա չհամարելու մանկավարժագիտական դիրքորոշմամբ: Հետազոտության արգասիքները մեծապես կնպաստեն նաև մանկատան գործունեության արդյունավետության մակարդակի բարձրացմանը:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ:

1. «Սոցիալական մանկավարժ» հասկացությունը պետք է փոխարինվի «սոցիալական դաստիարակ» հասկացությամբ, քանի որ այդ մասնագետը զբաղվում է անապաստան երեխաներին ցուցաբերվող օգնությամբ, անչափահասների խնամակալությամբ, ինչպես և կատարում է սոցիալական կարգի բազմաթիվ այլ աշխատանքներ, որոնք զուտ դաստիարակչական են և որևէ կապ չունեն մանկավարժական գործունեության հետ:

2. Իրականությանը չի համապատասխանում մանկավարժագիտական գրականության մեջ սոցիալական աշխատանքի հիմքերից մեկը մանկավարժագիտությունը համարելը և սոցիալական դաստիարակի աշխատանքը սոցիալական աշխատանքին նույնացնելը, այն դեպքում, երբ սոցաշխատողի գործառույթներից են երեխաներին կենցաղային բազմաբնույթ օգնության կազմակերպելը, առողջապահական հիմնարկներում բուժման ռեժիմը պահպանելուն օգնելը, մահացածի հարազատներին աջակցելը, և այլ աշխատանքներ, որոնք որևէ կապ չունեն մանկավարժի և սոցիալական դաստիարակի գործունեության հետ: «Սոցիալական մանկավարժ», «սոցիալական աշխատող» և «սոցիալական դաստիարակ» հասկացությունների մեկնաբանություններում տիրող այսպիսի խառնաշփոթություններից ազատվելը կօգնի իրաժարվել «սոցիալական մանկավարժ» հասկացությունից որպես իրականությանը չհամապատասխանող: Իսկ սոցիալական աշխատողին սոցիալական դաստիարակ, ինչպես և սոցիալական աշխատանքն էլ սոցիալական դաստիարակություն չհամարելը այն հիմքերից են, որոնք ևս հնարավորություն են տալիս սոցիալական դաստիարակությունն իր առարկան դարձրած գիտությունը անվանել սոցիալական դաստիարակագիտություն:

3. Խնդրահարույց է սոցաշխատող մասնագիտությունը մանկավարժագիտության կամ դաստիարակագիտության առարկայական

սահմաններում ընդգրկելը, քանի որ այդ աշխատանքը աղերսներ չունի մանկավարժական և ոչ մանկավարժական գործընթացներով կայացող դաստիարակության հետ:

4. Իրականությանը չհամապատասխանող սոցիալական կոչվող մանկավարժագիտությունը փոխարինելով իրականությանը համապատասխանող սոցիալական դաստիարակագիտությամբ, հնարավոր կլինի «սոցիալական մանկավարժություն» կոչվող բուհական ուսումնական առարկայից և այդպիսի դասագրքերից անցում կատարել «սոցիալական դաստիարակագիտություն» անվանվող ուսումնական առարկայի և համապատասխան դասագրքի կառուցմանը, որը կօգնի ճիշտ կողմնորոշվել մանկավարժական բուհեր ընդունվողներին և կնպաստի բուհում որակյալ սոցիալական աշխատողներ թողարկելուն:

5. «Մանկավարժական գործունեությամբ կայացող դաստիարակություն» հասկացությունը «դասավանդմամբ առաջացվող աշակերտական գործունեությամբ կայացող դաստիարակություն» հասկացությամբ փոխարինելը: Իսկ «ոչ մանկավարժական գործունեությամբ կայացող դաստիարակություն» հասկացությունն էլ՝ «ամենուրեք ծավալվող գործունեությամբ կայացող դաստիարակություն» հասկացությամբ փոխարինելը հնարավոր կդարձնի առայժմ խոսել ուսումնական և արտաուսումնական գործունեությամբ միայն դպրոցում աշակերտների կայացող դաստիարակության վերաբերյալ: Իսկ հետագայում էլ լուրջ խոսաբքություն բացել ամենուրեք օբյեկտիվորեն, շարունակաբար և մշտապես կայացող դաստիարակության մասին:

6 . Դպրոցին իր հիմնական գործառույթից՝ դասերին աշակերտների մշտապես կայացող դաստիարակությունը կառավարելուց, զրկած մանկավարժագիտության վնասաբերությունը դրսևորվում է նաև դասերի նկատմամբ մանկատան սաների անցանկալի վերաբերմունքով, որը լրջորեն խոչընդոտում է կրթության բովանդակության յուրացմամբ նրանց զարգացումն ապահովելուն: Դա պայմանավորված է մանկավարժագիտության կառուցած ուսուցման մեթոդներում աշակերտական դասանպատակի և սովորողերին շահագրգռելու մասին գիտելիքների իսպառ բացակայությամբ, որն էլ ուսումնառությունը դարձնում է, սովորողի համար անձնային արժեք չունեցող: Ահա թե ինչու **դպրոցի դաստիարակագիտության կառուցումը մեծապես կնպաստի ուսման նկատմամբ նաև մանկատան սաների անձնային դրական վերաբերմունքի ձևավորմանն, իր բազմաթիվ դրական հետևանքներով, ինչպես և կօժանդակի մանկատան դաստիարակներին դասապատրաստումը բարձր մակարդակով կազմակերպելուն ու մանկատանը կայացող դաստիարակությունը կառավարելուն:**

7. Սոցիալական մանկավարժագիտությունը սոցիալական դաստիարակագիտությամբ փոխարինելու հիմնավորվածությունը հերթի է դնում մանկավարժական գիտությունների համակարգում կատարել անվանափոխություններ: Օրինակ. նախադպրոցական մանկավարժագիտությունը պետք է փոխարինվի նախադպրոցական դաստիարակագիտությամբ, դպրոցինն էլ՝ դպրոցի դաստիարակագիտությամբ և այլն և այլ: Այդ դեպքում արդեն այդ կունենանք դաստիարակագիտությունների համակարգ, որն արդեն նրա բաղադրիչներին պատասխանատու կդարձնի երեխաների դաստիարակվածության համար:

8. Սոցիալական մանկավարժություն կոչված գիտությունը սոցիալական դաստիարակագիտությամբ փոխարինելու շնորհիվ ստեղծված իրադրության

տրամաբանությունը պահանջում է մանկավարժական կոչվող գիտությունը փոխարինել դաստիարակագիտությամբ:

Դա սոսկ անվանափոխություն չէ, այլ իրականությունը ոչ համարժեք արտացոլող մանկավարժագիտությունը համարժեք արտացոլող դաստիարակագիտությամբ փոխարինելն է: Դա հիմնավորվում է նաև նրանով, որ մանկավարժական գիտությունը.

8.1. Ուսուցումն առանձնացնում է դաստիարակությունից, մինչդեռ ուսուցումը դաստիարակությունը կայացնող գործընթացներից է:

8.2. Դաստիարակությունը ներկայացնում է որպես մարդկանց կազմակերպած գործընթաց, պայմանավորված նրանց կամքով ու ցանկություններով, հաշվի չառնելով, որ կա նաև այլ, մեր կարծիքով, իրականությունը համարժեք արտացոլող, պատկերացում այն մասին, որ դա օբյեկտիվ գործընթաց է ու կայանում է ամենուրեք և մշտապես՝ չպայմանավորվելով մարդկանց կամքով և ցանկություններով:

8.3. Դաստիարակությունը ներկայացնում է որպես միայն դրական որակներ ձևավորող գործընթաց, այն դեպքում, երբ կա նաև, մեր կարծիքով իրականությունը համարժեք արտացոլող այլ պատկերացում, ըստ որի կա նաև բացասական որակներ ձևավորող ու բթացնող դաստիարակություն:

8.4. Ստեղծել է դաստիարակության մեթոդներ, հաշվի չառնելով, որ կա դաստիարակությունը օբյեկտիվորեն կայացող գործընթաց դիտարկող, մեր կարծիքով իրականությանը հարիր, պատկերացում ևս, ըստ որի դաստիարակությունը, լինելով օբյեկտիվորեն կայացող գործընթաց չունի մեթոդներ, հետևաբար կան ոչ թե դաստիարակության, այլ դաստիարակության կառավարման և դաստիարակչական աշխատանքի կազմակերպման մեթոդներ:

9. Նշված և չնշված այլ արատներով գերհագեցած մանկավարժական կոչվող գիտությունը դպրոցի դաստիարակագիտությամբ փոխարինելու շնորհիվ կստանանք դպրոցի համար հզոր արտադրողական կարողություններ ունեցող դպրոցի դաստիարակագիտություն, որը դպրոցը իսկապես կդարձնի գերակա դաստիարակչական հաստատություն:

ՀԵՏԱԶՈՒԹՅԱՆ ՓՈԽԵՐԸ

Ուսումնասիրությունը տարվել է մի քանի փուլով՝ 2004-2010թթ.: Այն կազմված է հինգ փոխկապակցված փուլերից:

Առաջին փուլը կրել է ծանոթացման բնույթ: Կատարվել է ընդհանուր ծանոթացում մանկատան կառուցվածքի և երեխաների հետ, որի ընթացքում հնարավոր է դարձել ի հայտ բերել ուսումնական գործունեության նկատմամբ երեխաների ցածր մոտիվացիա և ոչ ցանկալի առաջադիմության մակարդակ: Հարկ եղավ հայտնաբերել այդ երևույթի պատճառները, որը և դարձավ հետազոտության համար արդիական խնդիր:

Երկրորդ փուլում թեստերի և հարցաթերթիկների միջոցով իրականացվել է աշխատանք Վանաձոր քաղաքի երեք դպրոցներում. դաստիարակության մասին ուսուցիչների վերաբերմունքի բացահայտման նպատակադրմամբ:

Երրորդ փուլում ուսումնասիրվել է ամբողջ «Սոցիալական մանկավարժություն» կոչված բուհական դասագրքերի ուսումնասիրություն, նրանց կառուցվածքի և բովանդակության մեջ տեղ գտաց թերությունների բացահայտման նպատակով:

Չորրորդ փուլում իրականացվել են աշխատանքներ «սոցիալականացում» և «դաստիարակություն» հասկացությունների հարաբերակցության հստակեցման

ուղղությամբ: Հոգեբանական գրականության ուսումնասիրության միջոցով բացահայտվել են տեսական նախադրյալներ, որոնք հիմք են ծառայել հիմնավորելու համար սոցիալական մանկավարժագիտությունից սոցիալական դաստիարակագիտությանը անցնելու պահանջը:

Հինգերորդ փուլում կատարվել է ամբողջ հետազոտության արդյունքների ամփոփումը և ատենախոսության շարադրանքը, այն հավաստում է, որ սոցիալական մանկավարժագիտությունը սոցիալական դաստիարակագիտությամբ փոխարինումը ընդհանուր դաստիարակագիտություն ունենալու նախապայման ապահովվում է տեսականորեն հիմնավորված մեթոդաբանությամբ և մեթոդների համալիր գործածությամբ, ինչպես նաև համապատասխան ստացված տվյալների արժանահավատությունը: Հետազոտության արդյունքները հավաստում են առաջարկվող փոփոխության կիրառման անհրաժեշտությունը:

է:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ

իրականացվել է Վանաձորի «Մխիթար-Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի և Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի /ներկայումս՝ համալսարան/ մանկավարժության ամբիոններում, Վանաձորի թիվ 5ավագ, թիվ 28 և թիվ 7 հիմնական դպրոցներում, մանկատանը նաև ՎՊՄԻ հիմնադրման 40-ամյակին նվիրված գիտաժողովին «Սոցիալական աշխատանքը մանկատանը» թեմայով իմ ելույթով և տպագրված հոդվածներով:

ԹԵՄԱՅԻ ՄՇԱԿԿԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ:

Առայսօր սոցիալական դաստիարակագիտության հարցերով զբաղվել է միայն Լ. Մարությանը 2010թ., պաշտպանելով «Սոցիալական դաստիարակության ժամանակակից հիմնախնդիրը» ատենախոսությունը:

Մեր հետազոտությունը կատարում է հաջորդ քայլը սոցիալական մանկավարժագիտությունը սոցիալական դաստիարակագիտությամբ փոխարինելու, իսկ հետագայում էլ դպրոցի մանկավարժագիտությունը դպրոցի դաստիարակագիտությամբ փոխարինելու ճանապարհին:

Ձեռք կբերվեն նոր գիտելիքներ «Սոցիալական մանկավարժագիտությունը» «Սոցիալական դաստիարակագիտությամբ», «Դպրոցի մանկավարժագիտությունը» «Դպրոցի դաստիարակագիտությամբ», ինչպես և «Ընդհանուր մանկավարժագիտությունը» «Ընդհանուր դաստիարակագիտությունը»-ով փոխարինելու մասին՝ ստեղծելով այդ փոփոխություններն ապահովող գիտելիքների համակարգ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԲԱԶԱ Է ՀԱՆԴԻՍԱՅԵԼ սոցիալական մանկավարժագիտության ինձ հասու ամբողջ գրականությունը, ընդհանուր մանկավարժագիտության դասագրքերը, ուսանողների և ուսուցիչների հետ կայացած զրույցներ ինչպես և ուսուցիչների համար կազմված թեստերի միջոցով ստացված նյութերը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածից: Ատենախոսության հիմնական ծավալը կազմում է 170 համակարգչային էջ: Գրականության ցանկում ընդգրկված են 115 անուն գրականություն:

Առաջին գլխում «Սոցմանկավարժությանը նվիրված մի քանի աշխատությունների քննական վերլուծությունը «սոցմանկավարժ» հասկացությունը «սոցդաստիարակ» հասկացությամբ փոխարինելը հիմնավորելու նպատակադրմամբ», ներկայացվում է սոցմանկավարժագիտությանը նվիրված աշխատությունների ուսումնասիրության շնորհիվ ստացված արդյունքներից բխող «սոցմանկավարժ» հասկացությունից հրաժարվելու անհրաժեշտության հիմնավորումը:

Ատենախոսության հիմնախնդրի լուծման համար կազմակերպվել են դասագրքերի ուսումնասիրություն՝ հետազոտության մեթոդաբանական հիմք ընդունելով այն դրույթը, որ մանկավարժական և դաստիարակչական գործունեությունները միշտ չէ, որ միևնույն հարթության վրա են դրվում: Այստեղ շեշտը դրվում է այն բանի վրա, որ յուրաքանչյուր մանկավարժ և մանկավարժական գործունեություն որակվում է որպես դաստիարակ և դաստիարակչական գործունեություն, այնինչ ամեն դաստիարակ չէ, որ մանկավարժ է և ամեն դաստիարակչական գործունեություն չէ, որ մանկավարժական գործունեություն է:

1.1. Առաջին գլխի առաջին ենթագլխում՝ Վ.Դ. Սենյոնովի «Սոցիալական մանկավարժություն՝ պատմությունը և ներկան» աշխատության ուսումնասիրությամբ հիմնավորվում է, որ այդտեղ իրականում խոսքը սոցիալական դաստիարակության մասին է: Հեղինակը իր աշխատության մեջ խոսում է միայն և միայն դաստիարակության մասին, ինչը բացահայտել են նաև Բ.Զ. Վուլֆովը և Վ.Դ. Իվանովը, որոնք արձագանքել են այդ աշխատությանը վերաբերող հատուկ հոդվածով՝ դրական գնահատելով գրվածը, միևնույն ժամանակ սոցիալական մանկավարժին վերագրելով դաստիարակչական գործառույթ:

1.2. Առաջին գլխի երկրորդ ենթագլխում՝ «Ա.Վ.Մուդրիկի, Յու. Վասիլկովայի, Գ.Ն. Շտինովայի լույս տեսած «Սոցիալական մանկավարժություն» դասագրքերում ներկայացվածը դաստիարակության նոր հայեցակարգի լույսի տակ» ներկայացվում է «սոցիալական մանկավարժ» հասկացության փոխարինման հիմնավորումը: Դիտարկվում են Ա.Վ. Մուդրիկի «Սոցիալական մանկավարժություն» դասագրքում տեղ գտած այնպիսի դատողություններ, պատկերացումներ և դրույթներ, որոնք վկայում են, որ այդ դասագիրքը նվիրված է միայն սոցիալական դաստիարակության խնդիրների լուսաբանմանը: Գրքի տարբեր էջերում հաճախ է գրվում, որ սոցիալական մանկավարժությունն ուսումնասիրում է սոցիալական դաստիարակությունը սոցիալականացման կոնտեքստում կամ «սոցիալական մանկավարժությունը հետազոտում է հասարակության դաստիարակչական ուժերի «ինտեգրացիան»: Նման դատողությունները ստիպում են մտածել, որ ճիշտ չէ ոչ մանկավարժական գործընթացներով կայացող դաստիարակության մասին խոսելը, օգտագործելով «սոցիալական մանկավարժություն» հասկացությունը, այն դեպքում, երբ խոսքը պետք է վերաբերի սոցիալական դաստիարակությանը:

Բացահայտվել են «սոցիալական մանկավարժ», «սոցիալական աշխատող» և «սոցիալական դաստիարակ» հասկացություններին վերաբերող գիտելիքների բնագավառում առկա խառնաշփոթությունները: Պահանջվում է հստակեցնել այդ հասկացությունների բովանդակության վերաբերող պատկերացումները՝ միմյանցից ունեցած տարբերություններով: Եթե կան սոցդաստիարակություն,

սոցմանկավարժություն և սոցաշխատանք կոչվող իրողությունները, ապա անհրաժեշտ է հստակեցնել յուրաքանչյուրին վերաբերվող պատկերացումները: Այս հարցում կարևորվում է «սոցիալական մանկավարժ» հասկացությունից հրաժարվելը, քանի որ այդ մասնագետը մանկավարժ չէ: Այդ հրաժարարվելու գաղափարը նույնպես հիմք է ստեղծում սոցիալական մանկավարժագիտությունից սոցիալական դաստիարակագիտությանը անցնելու համար:

Վերլուծության առարկա դարձել նաև Գ. Ն. Շտինովայի և Մ.Ա. և Յ.Ն. Գալագուզովաների «Սոցիալական մանկավարժություն» դասագիրքը որի հեղինակները այնքան էլ հստակ պատկերացում չունեն մանկավարժական կոչվող գիտության մասին, այդ պատճառով էլ բազմաթիվ երևույթներ, պատկերացումներ և մոտեցումներ վերագրել են մանկավարժությանը:

Այս դասագրքի քննական վերլուծությունը ևս անհրաժեշտություն է առաջացրել, որ «սոցիալական մանկավարժ» հասկացությունը փոխարինվի «սոցիալական դաստիարակ» հասկացությամբ, իսկ «սոցիալական մանկավարժագիտություն»-ն էլ՝ «սոցիալական դաստիարակագիտություն» հասկացություններով:

1.3 Առաջին գլխի երրորդ ենթագլխում «Սոցիալական մանկավարժություն հասկացությունը Լ.Պ. Կրիվչենկոյի խմբագրած «Մանկավարժություն» բուհական դասագրքում» խոսվում է առանձին ներկայացված «Սոցիալական մանկավարժություն» բաժնի մասին: Այստեղ սոցիալական մանկավարժությունը համարվում է գիտություն դաստիարակության մասին, բայց չի կոչվում իր առարկայի անունով: Ըստ հեղինակի ներկայացման այդ մանկավարժներն աշխատում են ընտանիքներում՝ նպաստներ, կենսաթոշակներ, բժշկական և այլ օգնություններ ստանալու գործում, որոնք կապ չունեն մանկավարժական գործունեության հետ:

Այդ դասագրքում սոցիալ-մանկավարժական գործունեության նպատակներից են համարվում երեխաների սոցիալական և կանանց շահերի պաշտպանությունը, ինչպես և հաշմանդամների նկատմամբ դրսևորվող հոգատարությունը և այլն, և այլն որոնք վերաբերում են միայն սոցաշխատողի, բայց ոչ մանկավարժի գործունեությանը, քանի որ ամեն ինչ սոցիալական դաստիարակի և սոցիալական դաստիարակության է վերաբերում, այսինքն այստեղ ևս սոցիալական մանկավարժությունը սոցիալական դաստիարակագիտություն համարելու լուրջ հիմքեր կան:

1.4. Զորրորդ ենթագլխում քննական վերլուծության առարկա է դարձել «Մ.Վ. Շակուրովայի «Սոցմանկավարժի աշխատանքի մեթոդիկական և տեխնոլոգիան» աշխատությունը, որտեղ ևս խոսվում է ոչ թե սոցմանկավարժության, այլ սոցդաստիարակության մասին, քանի որ դասագրքում ներկայացված սոցմանկավարժի գործառնություններից են ընտանիքների, աշխատանքային կոլեկտիվների, լրատվական միջոցների և միկրոսոցիումի օգնությամբ ապահովել անձի շահերի ու իրավունքների պաշտպանությունը: Անգամ քրեակատարողական հիմնարկներում աշխատողը, որի պարտականությունն է կատարել զուտ դաստիարակչական աշխատանքներ, դարձյալ համարվում է սոցմանկավարժ: Ներկայացվածը ևս մեկ անգամ վկայում է այն մասին, որ սոցդաստիարակը նույնացվում է մանկավարժին, որը չի համապատասխանում իրականությանը:

1.5. Առաջին գլխի հինգերորդ «Սոցմանկավարժության մասին այս կամ այն առիթներով արտահայտված դատողությունները քննախույզ ուսումնասիրության առարկա» ենթագլխում ուշադրություն է դարձվել այն փաստի վրա, որ, եթե մի

ժամանակ սոցմանկավարժ և սոցաշխատող տերմինները առանձնացվում էին, ապա այսօր արդեն սոցաշխատանք և սոցմանկավարժություն դիսցիպլինները հաճախ են համարվում միևնույնը՝ տարբեր անուններով, մինչդեռ սոցաշխատողը գործ ունի անհատների հետ՝ օգնելու նրանց գոյատևմանը օգնելու նրանց, իսկ սոցդաստիարակն իրականացնում է մարդու դաստիարակությունը սոցիումում:

Աշխատանքի երկրորդ գլուխը «Սոցիալական մանկավարժությունը սոցիալական դաստիարակագիտությամբ փոխարինելու հնարավորության իրականացումը» նվիրված է այդ խնդրի լուծմանը: Այն ունի 6 ենթագլուխ:

2.1. Ըստ երկրորդ գլխի առաջին ենթագլխի՝ «Սոցիալականացում» հասկացության կայացման փուլերի բնութագիրը» ժամանակակից պաշտոնական մանկավարժագիտության մեջ սոցիալականացումը չի դիտարկվում որպես դաստիարակության տեսակ: Այստեղ այդ երկուսը ներկայացվում են իբրև միմյանցից առանձնացված երևույթներ, սակայն իրականում այդ երկու դեպքում էլ խոսքը մարդու մեջ կատարվող որակական փոփոխությունների մասին է, միայն թե դաստիարակությունը դիտարկվում է որպես ամեն տեսակ փոփոխությունների գործընթաց, իսկ սոցիալականացում միայն անձնավորության սոցիալական կոչվող որակների ձևավորման գործընթաց: Ահա թե ինչու առավել իրական է սոցիալականացումը ներկայացնել որպես սոցդաստիարակության արգասիք, իսկ սոցդաստիարակությունը՝ որպես դաստիարակության տեսակներից մեկը:

2.2. Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ «Սոցիալական մանկավարժությունից սոցիալական դաստիարակագիտության անցնելու հիմնավորումը «մանկավարժական գործընթաց» և «մանկավարժական գործունեություն» հասկացությունների բովանդակությանը և ծավալին դիմելով» ներկայացվել են մանկավարժական գրականության ուսումնասիրության այն արդյունքները, որոնց շնորհիվ ակնհայտվում է սոցիալական մանկավարժագիտությունը ընդհանուր մանկավարժագիտության ճյուղերից մեկը չլինելը, քանի որ դրանք առանձնացվում են թե իրենց բնորոշումներով, թե իրենց առարկաներով:

2.3. Երկրորդ գլխի երրորդ ենթագլխում՝ «Սոցիալական մանկավարժությունը ընդհանուր մանկավարժության ճյուղ չհմարելու հիմնավորումը» ներկայացվել են տարբեր հեղինակների աշխատությունների ուսումնասիրության այն արդյունքները, որոնց շնորհիվ մեկ անգամ ևս հիմնավորվում է սոցիալական մանկավարժագիտությունը սոցիալական դաստիարակագիտությամբ փոխարինելը:

2.4. Երկրորդ գլխի չորրորդ ենթագլխում՝ «Սոցաշխատանք», «սոցմանկավարժ» և «սոցմանկավարժություն» հասկացությունները քննարկման առարկա» ներկայացվում են հասկացությունները միմյանց հետ համեմատելու արդյունքները, որոնք թույլ են տալիս մտածելու, որ դրանք համարժեք չեն արտացոլում սոցիալական ոլորտում կատարվող աշխատանքների էությունը, ինչը անհրաժեշտ է դարձնում հրաժարվելը դրանցից՝ փոխարինելով այդ ամենը իրականությանը համարժեք «սոցիալական դաստիարակ», «սոցիալական դաստիարակություն» և «սոցիալական դաստիարակագիտություն» հասկացություններով:

2.5. Երկրորդ գլխի հինգերորդ ենթագլխում՝ «Մանկավարժությունը դաստիարակագիտությամբ փոխարինելու խնդրի լուծման տարբերակներից մեկի ընդունման հիմնավորումը» առաջարկվում է Յու. Բաբանսկու խմբագրությամբ լույս տեսած «Մանկավարժություն» դասագիրքը հանել ուսանողությանը պարտադրվող գրականության ցանկից, քանի որ այդ դասագիրքը փաստորեն

մանկավարժությունը ներկայացրեց որպես գիտություն չդաստիարակող ուսուցման մասին, որից հետո էլ սկսվեց այդ դիրքորոշման պաշտոնականացումը, ետին պլան մղելով դպրոցի դաստիարակչական գործունեությունը: Անդրադարձ է կատարվում դաստիարակագիտության տեսության ակունքներից հեռանալու իրողությանը, որն էլ, առաջացրել է մանկավարժագիտությունը դաստիարակագիտությամբ փոխարինելու անհրաժեշտությունը: Այս ամենը կնպաստի ընդհանուր դաստիարակագիտության ստեղծմանը, որի ճյուղերից մեկը կլինի սոցիալադաստիարակագիտությունն իր սոցիալադաստիարակություն առարկայով:

2.6. Երկրորդ գլխի վեցերորդ ենթագլխում` «Սոցիալականացում» և «Դաստիարակություն» հասկացությունների միմյանց հետ ունեցած իրական հարաբերակցությունը, աղավաղումը մանկավարժական և հոգեբանական գրականության մեջ» ներկայացվել են սոցիալականացումը դաստիարակությունից առանձնացնելու և այդ երկուսն առանձին գործնաբանություններում դիտարկող դրույթներն ու պատկերացումները տարբեր հեղինակների աշխատություններում: Ուշագրավ է դարձվում նաև այն, թե ինչպես են որոշ հեղինակներ միմյանցից տարբերում «դաստիարակություն», «կայացում», «Ձևավորում» և «սոցիալականացում» հասկացությունները, որը չի համապատասխանում իրականությանը: Իրականում այս սահմանումները միմյանցից տարբերվում են միայն բառային ձևակերպումներով, բայց ոչ` բովանդակականությամբ:

Բոլոր դեպքերում էլ եզրակացությունը մեկն է. ընդհանուր հասկացությունը «դաստիարակությունն» է, և «սոցիալականացում»-ը նրա համար ենթահասկացություն է: Անդրադարձ է կատարվում հոգեբանական գրականության մեջ «սոցիալականացում» և «դաստիարակություն» հասկացությունների միմյանց հետ ունեցած հարաբերակցությանը: Հոգեբանների` օգտագործած «սոցիալական դաստիարակություն» հասկացությունն անգամ ցույց է տալիս, որ ըստ նրանց սոցիալականացումը սոցիալադաստիարակության արգասիքն է, իսկ այդ դաստիարակությունն էլ պետք է դառնա սոցիալադաստիարակագիտության առարկան:

Երրորդ գլուխը «Սոցիալական մանկավարժությունը դաստիարակագիտությամբ փոխարինելու հիմնավորումը մանկատան գործունով» վերնագրով բաղկացած է երկու ենթագլխից:

3.1. Առաջին ենթագլխում` «Մանկատունը սոցիալական դաստիարակության ինստիտուտ և դաստիարակագիտության պահանջատեր» ներկայացվել է մանկատունը, որպես սոցիալական դաստիարակության ինստիտուտ, որտեղ իրականացվում է դաստիարակչական աշխատանք: Նշվում է, որ անհանգստացնող է մանկատան սաների անտարբերությունը և հաճախ բացասական վերաբերմունքը դասերի և դպրոցի նկատմամբ, որի հիմնական պատճառն այն է, որ, մանկավարժությունը, դաստիարակության տեսության առարկայից հանելով դասերը, ուսուցման տեսությանը զրկել է դասերին մշտապես կայացող դաստիարակության գործընթացով զբաղվելու ամենակարևոր պարտականությունից: Դրա բացասական հետևանքներից մեկը ուսումնական աշխատանքի նկատմամբ հատկապես մանկատան սաների դրական վերաբերմունք ձևավորելու կարևորության անտեսումն է:

3.2. Երրորդ գլխի երկրորդ ենթագլխում` «Դմանկավարժական գիտակցության մեջ առկա պատկերացումների վիճակը բացահայտող աշխատանքների վերլուծությունը»

ասավանդողների ներկայացվում են դասավանդողների այն դիրքորոշումները դասի դաստիարակչական ներուժի մասին, որոնք բացահայտվել են մեր կողմից մշակված հատուկ թեստերի միջոցով: Դրանք կազմվել են այնպես, որ թեստավորվողը չգիտե թեստավորողի նպատակները: Նա համոզված է, որ իր գիտելիքներն են ստուգվում, այնինչ այդ թեստերը բացահայտում են մարդու պատկերացումները ուսուցման և դաստիարակության հարաբերակցության մասին: Կազմած թեստերի օրինակները և պատասխանների արդյունքները ներկայացված են ատենախոսության հավելվածներում: Մտահոգիչն այն էր, որ վերլուծության արդյունքում ակնհայտվում է, որ ուսուցիչները դաստիարակությունը առանձնացնում են ուսուցումից և ներկայացնում այն, որպես ոչ օբյեկտիվ գործընթաց, որի մեղքը պաշտոնական մանկավարժագիտությանն է:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՑ ԲԻՆԱԾ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Դպրոցում և ամենուրեք կայացող դաստիարակության տեսակներն իրենց առարկան դարձրած գիտություններն արդեն պետք է անվանել դպրոցի դաստիարակագիտություն և ընդհանուր դաստիարակագիտություն՝ սկսելով դրանց կառուցման աշխատանքները:

2. Կառուցելով դպրոցի դաստիարակագիտությունը՝ կազատվենք ուսուցումը դաստիարակությունից առանձնացնող և դրանով դպրոցի մեծ վնաս հասցնող դպրոցի մանկավարժագիտությունից:

3. Սոցիալական մանկավարժագիտությունը սոցիալական դաստիարակագիտությամբ փոխարինելն ընդունելով որպես իրատեսական, կարելի է կասկածի տակ դնել մանկավարժության գիտական կարգավիճակը, հաշվի առնելով արդեն այդ մասին երբեմն-երբեմն գիտական գրականության մեջ և մամուլում հնչող քննադատությունը:

4. Սոցիալական մանկավարժությունը սոցիալական դաստիարակագիտությամբ փոխարինելու տրամաբանությունը հերթի է դնում էթնիկական մանկավարժություն կոչվող գիտությունը էթնիկական դաստիարակագիտությամբ փոխարինելը, քանի որ էթնոսը մանկավարժ չէ, այսինքն նա ունի ոչ թե մանկավարժական, այլ զուտ դաստիարակչական գործառույթ:

5. «Մանկավարժություն» գիտությունը մանկավարժագիտությամբ, հետո դա դաստիարակագիտությամբ, սոցիալական մանկավարժն էլ սոցիալական դաստիարակով, հետո էլ սոցիալական մանկավարժությունը սոցիալական դաստիարակագիտությամբ փոխարինելու հրամայականը պայմանավորված է իրականությանը չհապատասխանող առաջինների բովանդակությամբ:

6. Պետք է ընդունելի համարել այն պատճառաբանությունը, ըստ որի, շրջանառության մեջ կորվեն «մանկավարժ» և «մանկավարժագետ» հասկացությունները, որոնք չկան մանկավարժագիտության մեջ, չնայած, կան դեռևս անվանում չստացած այդպիսի մասնագետներ:

Հետագայում մանկավարժագիտությունից ազատվելուց հետո դրանք կփոխարինվեն «ուսուցիչ» կամ «դասավանդող» հասկացություններով, ինչպես և շրջանառության մեջ «դաստիարագետ» նոր հասկացությամբ:

7. Դպրոցին իր դաստիարակչական գործառույթից զրկող մանկավարժագիտությունը դաստիարակագիտությամբ փոխարինելու իրականացումը պահանջում է լուրջ հետազոտություններ՝ դաստիարակագիտության լիարժեք կառուցման նպատակաուղղորդվածությամբ՝ ապագայում ունենալով ընդհանուր

դաստիարակագիտություն, որի կազմում կլինեն դուստր դաստիարակագիտություններ:

8. Կայացված սոցիալական դաստիարակագիտությունը հնարավորություն կտա քննադատաբար ընթերցել սոցիալական մանկավարժության, սակայն իրականում սոցիալական դաստիարակության մասին լույս տեսած գրականությունը, օգտվելու համար նրանում բովանդակվող հարուստ գիտելիքներից:

9. Պետք է իրականացնել փոփոխությունը՝ նպատակ ունենալով դպրոցին վերադարձնել իր տարածքում կայացող դաստիարակության կառավարման գործառույթը:

Իհարկե, մանկավարժագիտությունը դաստիարակագիտությամբ փոխարինելը խիստ դժվար, ավելի ճիշտ անլուծելի թվացող, խնդիրների առաջ կկանգնեցնի հետազոտողներին, սակայն պետք է իրականացնել փոփոխությունը՝ լծվելով դրանց լուծման ծանր գործին՝ նպատակ ունենալով դպրոցին վերադարձնել աշակերտների կայացող դաստիարակության կառավարման իր միակ գործառույթը:

10. Այս հետազոտությունն արժևորվեց նաև վերոբերյալ 9 կետերում ներկայացվածներով, քանի որ սոցմանկավարժագիտությունից սոցդաստիարակագիտության անցնելու հիմնախնդրի լուծման ընթացքում բացվեց հետազոտության կարիք զգացող այդ մեծ դաշտն իր հեռանակարային արժեքներով:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը արտացոլված է մանկավարժական մամուլում տպագրված հետևյալ հոդվածներում.

1. Պետրոսյան Ա. Սոցիալական աշխատանքը մանկատանը: Միջազգային գիտաժողովի նյութեր (նվիրված Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի հիմնադրման 40-ամյակին), Վանաձոր, 2009թ., էջ 235-240:

2. Պետրոսյան Ա. «Սոցիալականացում» հասկացության կայացման փուլերի բնութագիրը գիտության մեջ: «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, Վանաձոր, 4(24), 2009թ., էջ 183-186:

3. Պետրոսյան Ա. Մխիթարյան Վ., «Մանկավարժագիտություն» պաշտոնականացված դասագիրքը քննարկման առարկա, «Մխիթար Գոշ», գիտամեթոդական հանդես, Վանաձոր, 1(25), 2010թ. էջ 119-128:

4. Պետրոսյան Ա., Սոցիալական աշխատանքը, սոցիալական մանկավարժությունը և սոցիալական մանկավարժագիտությունը քննարկման առարկա, «Մանկավարժություն» գիտամեթոդական վերլուծական ծրագիր, Երևան, N4, 2010թ., էջ 39-46:

5. Պետրոսյան Ա. «Սոցիալական մանկավարժություն» հասկացությունը՝ քննարկման առարկա: «Մխիթար Գոշ», գիտամեթոդական հանդես, Վանաձոր, N 1-3, 2012թ., էջ 67-69:

6. Պետրոսյան Ա. «Մանկավարժություն» և «Դաստիարակություն» հասկացությունների բովանդակությունների հստակեցման մասին՝ «Մխիթար Գոշ», գիտամեթոդական հանդես, Վանաձոր, N 1-3, 2013թ., էջ 63-69:

ПЕТРОСЯН АНАИТ РАФИКОВНА

ПРОБЛЕМА ОБЕСПЕЧЕНИЯ ЗАМЕНЫ СОЦИАЛЬНОЙ ПЕДАГОГИКИ СОЦИАЛЬНЫМ ВОСПИТАНИЕВЕДЕНИЕМ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01. “Теория и история педагогики”.

Защита диссертации состоится 9 октября, 2014 г. в 12⁰⁰ на заседании специализированного совета 020 ВАК “Педагогика” по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна по адресу 0010, г. Ереван, ул. Тигран Меци 17.

Резюме

Актуальность исследования обусловлена незавидным так называемым положением социальной педагогики. Ее предметом является воспитание, осуществляющееся вне педагогической деятельности, но при этом, она официально считается социальной педагогией. Корни такого подхода скрыты в самой истории педагогики. Получается следующее: созданная в свое время наука о воспитании школьников, рассматривающая учебный процесс, как первостепенный вид воспитательной работы в школе, была названа “педагогией”, отделяя учебный процесс от воспитания. А ныне, при использовании термина “социальная педагогика”, ударение невольно ставится на учебный процесс, что является крайне некорректным, поскольку воспитание, о котором упоминается в науке “Социальная педагогика”, здесь осуществляется вне педагогического процесса.

Одним из правильных выходов из создавшегося положения является замена педагогики воспитаниеведением. Этому может способствовать также замена понятия “Социальная педагогика” понятием “Социальное воспитаниеведение”, и понятие “социальный педагог” – понятием “социальный воспитатель”.

Цель исследования - создание теоретических основ для замены социальной педагогики социальным воспитаниеведением.

Задачи исследования. Для достижения цели исследования возникла необходимость решения следующих задач:

1. Путем исследования основных работ по социальной педагогике выявить соответствие или несоответствие так называемого специалиста социального педагога педагогической реальности.
2. Обосновать предположения, что социализация является результатом воспитания, а также ошибочность того, что понятия “социализация” и “социальное воспитание” имеют разные содержания.
3. Обосновать отказ от социальной педагогики.
4. Выявить разницу в деятельности педагога и социального воспитателя, чтобы тем самым обосновать отказ от понятия “социальный педагог”
5. Показать значение создания социального воспитаниеведения для повышения уровня результативности деятельности детдома.
6. Раскрыть этапы становления понятия “социализация”.
7. Сделать приемлемым точку зрения о том, что “социальная педагогика” не является ветвью общей педагогики как и деятельность так называемого социального педагога не рассматривать как педагогическую.

Научная новизна исследования. В ходе исследования приобретены знания, способствующие созданию варианта решения проблемы замены

социальной педагогики социальным воспитанием, в виде системы следующих теоретических основ.

1. Считая социализацию результатом социального воспитания, необходимо освободиться от распространенного ошибочного разделения этого процесса на понятия “социализация” и “социальное воспитание”.
2. Обосновать важность, значимость и необходимость возвращения к истокам науки, созданной для школы Я.А.Коменским и его последователями, для создания социального воспитания.
3. Деятельность социального воспитателя не является педагогической.
4. Наблюдается несоответствие содержания понятия “педагогика среды” с жизненной реальностью.
5. Возникает необходимость замены понятия “народная педагогика” понятием “народное воспитание”.
6. Выявляется неуместное использование понятия “социальный педагог” в разделах учебного пособия “Социальная педагогика”, чем и обосновывается переход к применению понятия “социальный воспитатель”.
7. Заменяя понятие “Социальная педагогика” понятием “социальное воспитание”, мы получим возможность в последующем совершить переход от педагогики к воспитанию.

Теоретическая значимость исследования. Теория воспитания обогащается новыми понятиями “общее воспитание”, с помощью которых, созданная для школы наука дополняется теоретической установкой, создающей благоприятные условия для развития теории социального воспитания, а также возможности управления воспитанием, осуществляемым как в учебном процессе, так и вне его, тем самым создавая теоретические основы перехода от науки “педагогика” к науке “воспитание”. В ближайшем будущем это станет важным внедрением в развитие теории воспитания, обогащая ее предметное содержание

Практическая значимость исследования. Теоретическое значение результатов исследования становится гарантией для коренных изменений в практике социального воспитания, освобождая ее от практики педагогической деятельности, тем самым делая упор на практику социального воспитания. Полученные знания, обогащая педагогическое сознание учителей, становятся гарантией их плодотворной работы в школе, тем самым повышая уровень мотивации и результативности учебного процесса.

Надежность и достоверность результатов исследования обеспечивается теоретическим анализом исследовательского материала. Для этого были использованы методы, соответствующие исследовательским целям. Была проведена обработка результатов исследования.

Содержание диссертации. Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка литературы, списка использованной литературы и приложений. Общий объем диссертации 170 компьютерных страниц.

ANAHIT PETROSYAN RAFIK

THE ISSUE OF TRANSFORMING SOCIAL PEDAGOGY INTO SOCIAL NURTURE

This thesis is towards a degree of candidate of Pedagogical Sciences, specialty 13.00.01. "Theory and History of Pedagogy".

The thesis defence will be held on 9 October 2014 at 12:00 at the meeting of the Specialised Pedagogical committee 020 HAC for granting a scientific degrees at Armenian State Pedagogical University after Kh. Abovyan.

Address: Tigran Mets Str. 17, Yerevan, 0010).

SUMMARY

THE RELEVANCE OF THE RESEARCH. The rationale of this research can be justified by the low position that social pedagogy currently occupies. The Subject of this thesis is the type of education that takes place outside the boundaries of pedagogical activity, yet, it is usually referred to as Social Pedagogy. The underpinnings of this can be found in the history of pedagogy. The science of upbringing, as Yan Amos Komenskiy established it, focused on its main subject of upbringing. It was later, after Komenski, referred to as Pedagogy, however, the main subject of its focus remained on the concept of upbringing. Despite the fact that the subject of practiced pedagogy is, nowadays, considered to be education, it is continued to be referred to as pedagogy. Hence, the developed science of upbringing pupils, which erroneously considers educational process as a primary type of educational work at school, has been called "pedagogy" – segregating educational process from that of upbringing. One of the relevant solutions for improving this situation is substituting the concept of pedagogy with nurture. Additionally, changing the terms "Social Pedagogy" to "Social Nurture", and "Social Pedagogue" to "Social Upbringer" would also contribute to improving the current misconceptions. In other words, the development of theoretical foundations of social upbringing can foster transition from pedagogy to nurture.

THE AIM OF THE RESEARCH the development of theoretical foundations for substituting social pedagogy with social nurture.

THE OBJECTIVES OF THE RESEARCH. The following objectives have been considered

necessary for achieving the main goal of this research:

1. By investigating the main works of social pedagogy, identify the relevance (or the lack of it) of the so called specialised social pedagogue of pedagogical reality.
2. Ground the conjecture that: socialisation constitutes the result of upbringing; erroneous assumption that the concepts of "socialisation" and "social upbringing" have different meaning.
3. Ground the rejection of social pedagogy.
4. Identify the differences between the activities of a pedagogue and a social educator, in order to ground rejection from the concept of "social pedagogue".
5. Demonstrate the importance of developing the concept of social nurture for improving the works of an orphanage.
6. Unfold the phases of establishing the concept of "socialisation".
7. Make the perspective accessible, that social pedagogy is not a branch of general pedagogy as well as the activity of the social pedagogue is not a pedagogical one.

SCIENTIFIC NOVELTY AND VALUE OF THE RESEARCH. Considerable knowledge has been acquired towards the resolution of the problem of substituting social pedagogy with social nurture, as a system of the following theoretical foundations that foster that process:

1. For considering socialisation to be the outcome of social upbringing, it is necessary to break free from an erroneous division of this process into two disjoint concepts of socialisation and social upbringing.
2. It is important to return to the roots of the science, which was initiated for a school by Y.A. Komenskiy and his followers, for developing social nurture.
3. Professional practice of a social educator does not constitute a pedagogical one.
4. There are observable inconsistencies of the concept of “pedagogy of environment” and the life reality.
5. There is a necessity to substitute the concept of “public pedagogy” with the concept of “public nurture”.
6. The inappropriate use of the concept “social pedagogue” in the Social Pedagogy textbooks is being demonstrated, providing foundations towards using the concept of a social educator.

THE THEORETICAL SIGNIFICANCE OF THE RESEARCH. The theory of upbringing is being enriched with new concepts such as “general nurture”. These concepts enable adjustments of theoretical settings that are developed for schools – generating favourable conditions for the development of the theory of social upbringing as well as for the possibilities of managing upbringing, implemented both, within and outside the boundaries of educational process and therefore providing theoretical foundations of the transition from the science of “pedagogy” to the science of “nurture”. In the near future this will become an important investment into the development of the theory of upbringing – enriching its content

THE PRACTICAL SIGNIFICANCE OF THE RESEARCH. The theoretical meaning of the research results become the warranty for the corrections towards fundamental changes in the practice of a social upbringing - providing a liberation from the practice of pedagogical activity and emphasising the practice of social upbringing. The achieved knowledge, enriching the pedagogical conscience of teachers, becomes the warranty of their effective work at school, and therefore fosters improvement in the levels of motivation and effectiveness of educational process, yet reducing the workload of social upbringers, since this process already necessitates a certain level of maturity from the learners, and therefore reducing dropout rates.

RELIABILITY AND VALIDITY OF THE SURVEY RESULTS

The justification of the results can be ensured with the logical development of the thesis, with application of the identified systematic approach according to the goals and tasks, with application of theoretical research methods, as well as the systematic way of presenting the headings, goals, novelty and proposed statements. Six papers have already been published on the subject of this thesis.

THE STRUCTURE OF THE RESEARCH The thesis consists of: Introduction, three chapters, results, references and appendix. The length of the thesis consists of 170 pages.

